# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
# ԱՐՇԱԼՈՒՅՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արշալույս համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Արշալույս, 0231-6-09-36

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

11 նոյեմբերի 2016 թվականի N 50

## *ԱՎԱԳԱՆՈՒ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի հինգերորդ մասով.

## *ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝*

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արշալույս համայնքի ավագանու 2016 թվականի նոյեմբերի 11-ի թիվ 10 արտահերթ նիստի օրակարգը՝ համաձայն հավելվածի:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

*ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝*

Կողմ - 9 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԳՐԻԳՈՐՅԱՆ ՌՈՒԶԱՆՆԱ
2. ԵՓՐԵՄՅԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ
3. ԻՍՐԱՅԵԼՅԱՆ ԱՐԱՄ
4. ՀԱԽՎԵՐԴՅԱՆ ԳՈՀԱՐ
5. ԿՆՅԱԶՅԱՆ ԱՐԱՅԻԿ
6. ՄԿՐՏՉՅԱՆ ԱՐԹՈՒՐ
7. ՆԱԼԲԱՆԴՅԱՆ ՌՈՒԲԵՆ
8. ՇԱՀԲԱԶՅԱՆ ԱՇՈՏ
9. ՍԵՐՈԲՅԱՆ ԱՍԱՏՈՒՐ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ռ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

*2016 թվականի նոյեմբերի 11*

*գ. Արշալույս*

ՀԱՍՏԱՏՎԱԾ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐՇԱԼՈՒՅՍ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
2016 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 11 -Ի
ԹԻՎ 50 ՈՐՈՇՄԱՆ

# Օ Ր Ա Կ Ա Ր Գ

1. Ավագանու նիստի օրակարգը հաստատելու մասին:

Զեկ. Ա. Առաքելյան

2. Համայնքի 2016 թվականի բյուջեի երրորդ եռամսյակի հաշվետվությունը հաստատելու մասին:

Զեկ. Զ. Գրիգորյան

3. Համայնքային ծառայության մրցութային և ատեստավորման հանձնաժողովներում ընգրկվող ավագանու անդամների քանակական և անհատական կազմը որոշելու մասին:

Զեկ. Զ. Գրիգորյան

4. Համայնքի ավագանու 2015 թվականի դեկտեմբերի 16-ի թիվ 70-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին:

Զեկ. Զ. Գրիգորյան

5. Գումար հատկացնելու մասին:

Զեկ. Զ. Գրիգորյան

6. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արշալույս համայնքի վարչական տարածքում 2017 թվականի համար տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը սահմանելու մասին:

Զեկ. Զ. Գրիգորյան

7. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արշալույս համայնքի կողմից 2017 թվականի ընթացքում մատուցվող ծառայությունների դիմաց գանձվող վճարների դրույքաչափերը սահմանելու մասին:

Զեկ. Զ. Գրիգորյան

8.Համայնքապետարանի աշխատակազմի և բյուջետային հիմնարկների 2017 թվականի աշխատակիցների քանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին:

Զեկ. Զ. Գրիգորյան

9. Համայնքի ղեկավարի վարձատրության չափը որոշելու մասին:

Զեկ. Ա. Մկրտչյան

10. Դրամական օգնություն հատկացնելու մասին:

Զեկ. Ձ.Գրիգորյան

11.Համայնքի 2017 թվականի բյուջեն հաստատելու մասին:

Զեկ. Ձ.Գրիգորյան

12. Հողի հարկի գծով արտոնություն սահմանելու մասին:

Զեկ. Ձ. Գրիգորյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐՇԱԼՈՒՅՍ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արշալույս համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Արշալույս, 0231-6-09-34

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

11 նոյեմբերի 2016 թվականի N 51

## *ՀԱՄԱՅՆՔԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵՐՐՈՐԴ ԵՌԱՄՍՅԱԿԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի առաջին մասի 3-րդ կետով և 54-րդ հոդվածի երկրորդ մասով.

### *ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝*

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արշալույս համայնքի 2016 թվականի բյուջեի կատարման երրորդ եռամսյակի հաշվետվությունը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

*ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝*

Կողմ - 9 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԳՐԻԳՈՐՅԱՆ ՌՈՒԶԱՆՆԱ
2. ԵՓՐԵՄՅԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ
3. ԻՍՐԱՅԵԼՅԱՆ ԱՐԱՄ
4. ՀԱԽՎԵՐԴՅԱՆ ԳՈՀԱՐ
5. ԿՆՅԱԶՅԱՆ ԱՐԱՅԻԿ
6. ՄԿՐՏՉՅԱՆ ԱՐԹՈՒՐ
7. ՆԱԼԲԱՆԴՅԱՆ ՌՈՒԲԵՆ
8. ՇԱՀԲԱԶՅԱՆ ԱՇՈՏ
9. ՍԵՐՈԲՅԱՆ ԱՍՏՈՒՐ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ժ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

*2016 թվականի նոյեմբերի 11*

ՀԱՎԵԼՎԱԾ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐՇԱԼՈՒՅՍ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
2016 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 11-Ի
ԹԻՎ 51 ՈՐՈՇՄԱՆ

# Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ ՅՈՒ Ն
## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐՇԱԼՈՒՅՍ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԵՐՐՈՐԴ ԵՌԱՄՍՅԱԿԻ

| | |
|---|---|
| ԵԿԱՄՈՒՏՆԵՐ | 21066.59 |
| հողի հարկ | 3865.7 |
| հողի վարձավճար | 662.4 |
| գույքահարկ շենքերի և շինությունների | 354.5 |
| գույքահարկ փոխադրամիջոցների | 523.63 |
| այլ եկամուտներ | 85.46 |
| պաշտոնական ընթացիկ տրանսֆերտներ | 14542.8 |
| տեղական տուրքեր | 294.8 |
| տեղական վճարներ | 499.8 |
| գույքի վարձակալության վճար | 150.0 |
| ՏԻՄ-ին պետության կողմից պատվիրակված լիազոր. | 87.5 |
| | |
| ԾԱԽՍԵՐ | 22256.76 |
| աշխատավարձ | 4974.12 |
| էներգետիկ ծառայություններ | 246.56 |
| կապի ծառայություն | 40.3 |
| համակարգչային ծառայություններ | 25.2 |
| տեղեկատվական ծառայություններ | 48.0 |
| մասնագիտական ծառայություններ | 30.0 |
| գրասենյակային նյութեր | 120.0 |
| տրանսպորտային նյութեր | 1189.0 |
| մեքենաների և սարքավորումների ընթացիկ նորոգում | 14.0 |
| ընդհանուր բնույթի այլ ծառայություններ | 2527.64 |
| աղբահանում | 1028.32 |
| փողոցների լուսավորում | 1490.0 |
| <<Կրթություն և մշակույթ>> ՄՏ | 1780.0 |
| մշակութային միջոցառումների իրականացում | 4285.0 |
| արտադպրոցական դաստիարակություն | 2711.12 |
| այլ նպաստներ բյուջեից | 1747.5 |

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐՇԱԼՈՒՅՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արշալույս համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Արշալույս, 0231-6-09-34

## Ո Ր Ո Շ Ու Մ

11 նոյեմբերի 2016 թվականի N 52

## *ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ԵՎ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆ ԸՆԴԳՐԿՎՈՂ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐԻ ՔԱՆԱԿԱԿԱՆ և ԱՆՀԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

Ղեկավարվելով «Համայնքային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածով.

*ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝*

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արշալույսի համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության մրցութային և ատեստավորման հանձնաժողովներում ընդգրկվող ավագանու անդամների քանակական և անհատական կազմը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

***ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝***

Կողմ - 9 . Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԳՐԻԳՈՐՅԱՆ ՌՈՒԶԱՆՆԱ
2. ԵՓՐԵՄՅԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ
3. ԻՍՐԱՅԵԼՅԱՆ ԱՐԱՄ
4. ՀԱԽՎԵՐԴՅԱՆ ԳՈՀԱՐ
5. ԿՆՅԱԶՅԱՆ ԱՐԱՅԻԿ
6. ՄԿՐՏՉՅԱՆ ԱՐԹՈՒՐ
7. ՆԱԼԲԱՆԴՅԱՆ ՌՈՒԲԵՆ
8. ՇԱՀԲԱԶՅԱՆ ԱՇՈՏ
9. ՍԵՐՈԲՅԱՆ ԱՍԱՏՈՒՐ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Զ. ԳՐԻԳՈՐՅԱՆ**

***2016 թվականի նոյեմբերի 11***
***գ. Արշալույս***

ՀԱՎԵԼՎԱԾ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐՇԱԼՈՒՅՍ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
2016 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 11 -Ի
ԹԻՎ 52 ՈՐՈՇՄԱՆ

ԿԱԶՄ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

1. Եփրեմյան Անդրանիկ
2. Կնյազյան Արայիկ
3. Մկրտչյան Արթուր
4. Նալբանդյան Ռուբեն

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐՇԱԼՈՒՅՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արշալույս համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Արշալույս, 0231-6-09-36

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

11 նոյեմբերի 2016 թվականի N 53-Ն

### *ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2015 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 16-Ի ԹԻՎ 70-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի առաջին մասի 3-րդ կետով, <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի երկրորդ մասի 1-ին կետով,

**ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝**

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արշալույս համայնքի ավագանու 2015 թվականի դեկտեմբերի 16-ի <<Համայնքի 2016 թվականի բյուջեի հաստատման մասին>> թիվ 70-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

ա) եկամտային մաս

հողի հարկի գումարը պակասեցնել 3000.0/երեք միլիոն/ դրամով

փոխադրամիջոցների գույքահարկը պակասեցնել 1000.0/մեկ միլիոն/դրամով

բ)ծախսային մաս

01.1.1 խումբ ենթախմբի 4111 հոդվածը պակասեցնել 903.0 հազար դրամով
01.1.1 խումբ ենթախմբի 4112 հոդվածը պակասեցնել 1650.0 հազար դրամով
01.1.1 խումբ ենթախմբի 4212 հոդվածը պակասեցնել 500.0 հազար դրամով
01.1.1 խումբ ենթախմբի 4241 հոդվածն ավելացնել 20.0 հազար դրամով
01.6.1 խումբ ենթախմբի 4235 հոդվածը պակասեցնել 130.0 հազար դրամով
01.6.1 խումբ ենթախմբի 4241 հոդվածը պակասեցնել 100.0 հազար դրամով
09.1.1 խումբ ենթախմբի 4657 հոդվածը պակասեցնել 29.2 հազար դրամով
09.1.1 խումբ ենթախմբի 4213 հոդվածն ավելացնել 190.0 հազար դրամով

09.5.1 խումբ ենթախմբի 4239 հոդվածն ավելացնել 228.0 հազար դրամով
05.1.1 խումբ ենթախմբի 4264 հոդվածը պակասեցնել 70.4 հազար դրամով
10.7.1 խումբ ենթախմբի 4729 հոդվածը պակասեցնել 1035.4 հազար դրամով
06.4.1 խումբ ենթախմբի 4269 հոդվածը պակասեցնել 10.0 հազար դրամով
04.5.1 խումբ ենթախմբի 4251 հոդվածը պակասեցնել 10.0 հազար դրամով
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

***ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝***

Կողմ - 9 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԳՐԻԳՈՐՅԱՆ ՌՈՒԶԱՆՆԱ
2. ԵՓՐԵՄՅԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ
3. ԻՍՐԱՅԵԼՅԱՆ ԱՐԱՄ
4. ՀԱԽՎԵՐԴՅԱՆ ԳՈՀԱՐ
5. ԿՆՅԱԶՅԱՆ ԱՐԱՅԻԿ
6. ՄԿՐՏՉՅԱՆ ԱՐԹՈՒՐ
7. ՆԱԼԲԱՆԴՅԱՆ ՌՈՒԲԵՆ
8. ՇԱՀԲԱԶՅԱՆ ԱՇՈՏ
9. ՍԵՐՈԲՅԱՆ ԱՍՏՈՒՐ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Ձ. ԳՐԻԳՈՐՅԱՆ**

***2016 թվականի նոյեմբերի 11***
***գ. Արշալույս***

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐՇԱԼՈՒՅՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արշալույս համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Արշալույս, 0231-6-09-36

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

11 նոյեմբերի 2016 թվականի N 54

## ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի առաջին մասի 5-րդ կետով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը.

## ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արշալույս համայնքի ընտանիքի անդամին կորցրած բնակիչներին հատկացնել գումար համաձայն հավելված1-ի:
2. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արշալույս համայնքում ծառերի մշակության համար 2017 թվականի ընթացքում հատկացնել որպես աշխատավարձ 2700000 /երկու միլիոն յոթ հարյուր հազար/ ՀՀ դրամ և թունաքիմիկատի ձեռքբերման համար՝ 500000 /հինգ հարյուր հազար/ՀՀ դրամ գումար:
3. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արշալույս համայնքում աղբահանության աշխատանքների իրականացման համար 2017 թվականի ընթացքում հատկացնել 4000000 /չորս միլիոն/ ՀՀ դրամ գումար:
4. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արշալույս համայնքում ուսանողական անվճար ավտոբուսի 2017 թվականի համար տրանսպորտային նյութեր ձեռք բերելու նպատակով հատկացնել 2432000 /երկու միլիոն չորս հարյուր երեսուներկու հազար/ ՀՀ դրամ գումար, իսկ վարորդի աշխատավարձի համար 1800000 /մեկ միլիոն ութ հարյուր հազար/ ՀՀ դրամ:
5. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արշալույս համայնքի բնակիչներին անվճար տրամադրվող դիակառքի և համայնքապետարանի աշխատակազմին սպասարկող RAF4 փոխադրամիջոցի համար 2017 թվականի ընթացքում տրանսպորտային նյութեր ձեռք բերելու նպատակով հատկացնել 2690000 /երկու միլիոն վեց հարյուր իննսուն հազար/ ՀՀ դրամ գումար:
6. <<Արմավիրի մարզի երիտասարդական նախաձեռնությունների կենտրոն>> հասարակական կազմակերպությանը՝ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արշալույս համայնքում 2017 թվականի ընթացքում մշակութային միջոցառումներ կազմակերպելու նպտակով, հատկացնել 10000000 /տաս միլիոն/ ՀՀ դրամ գումար:
7. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արշալույս համայնքի 2017 թվականի ընթացքում գիշերային լուսավորությունն ապահովվելու նպատակով հատկացնել 2000000 /երկու միլիոն/ ՀՀ դրամ գումար:
8. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արշալույս համայնքի վարչական տարածքում 2017 թվականի ընթացքում ընդհանուր բնույթի բանվորական

աշխատանքներ կատարելու համար հատկացնել որպես աշխատավարձ 2880000 /երկու միլիոն ութ հարյուր ութսուն հազար/ ՀՀ դրամ գումար:
9.Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արշալույսի Ս. Գրիգորյանի անվան միջնակարգ դպրոց ՊՈԱԿ-ի նախադպրոցական դասարանի մեկ դաստիարակին 2017 թվականի 9 ամսվա աշխատավարձ վճարելու համար հատկացնել 702000 /յոթ հարյուր երկու հազար/ ՀՀ դրամ գումար:
10. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

***ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝***

Կողմ - 9 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԳՐԻԳՈՐՅԱՆ ՌՈՒԶԱՆՆԱ
2. ԵՓՐԵՄՅԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ
3. ԻՍՐԱՅԵԼՅԱՆ ԱՐԱՄ
4. ՀԱԽՎԵՐԴՅԱՆ ԳՈՀԱՐ
5. ԿՆՅԱԶՅԱՆ ԱՐԱՅԻԿ
6. ՄԿՐՏՉՅԱՆ ԱՐԹՈՒՐ
7. ՆԱԼԲԱՆԴՅԱՆ ՌՈՒԲԵՆ
8. ՇԱՀԲԱԶՅԱՆ ԱՇՈՏ
9. ՍԵՐՈԲՅԱՆ ԱՍՏՈՒՐ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ձ. ԳՐԻԳՈՐՅԱՆ**

***2016 թվականի նոյեմբերի 11***
***գ. Արշալույս***

ՀԱՎԵԼՎԱԾ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐՇԱԼՈՒՅՍ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
2016 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 11 -Ի
ԹԻՎ 54 ՈՐՈՇՄԱՆ

# ՑՈՒՑԱԿ
# ՀԱՏԿԱՑՎԱԾ ԳՈՒՄԱՐԻ

1. Ասլանյան Անահիտ Մոլոտի – 15000 /տասնհինգ հազար/ ՀՀ դրամ
2. Ղազարյան Անահիտ Խաչիկի - 15000 / տասնհինգ հազար/ ՀՀ դրամ
3. Մամիկոնյան Մարգարիտ Արմենակի – 15000 / տասնհինգ հազար/ ՀՀ դրամ
4. Պողոսյան Հովհաննես Գրիգորի - 15000 / տասնհինգ հազար/ ՀՀ դրամ:

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐՇԱԼՈՒՅՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արշալույս համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Արշալույս, 0231-6-09-36

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

11 նոյեմբերի 2016 թվականի N 55-Ն

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐՇԱԼՈՒՅՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի առաջին մասի 18-րդ կետով, <<Տեղական տուրքերի և վճարների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ, 9-րդ և 10-րդ հոդվածներով և <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 56-րդ հոդվածի երկրորդ մասով.

## ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Սահմանել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արշալույս համայնքի վարչական տարածքում 2017 թվականի համար տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

**ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝**

Կողմ - 9 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԳՐԻԳՈՐՅԱՆ ՌՈՒԶԱՆՆԱ
2. ԵՓՐԵՄՅԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ
3. ԻՍՐԱՅԵԼՅԱՆ ԱՐԱՄ
4. ՀԱԽՎԵՐԴՅԱՆ ԳՈՀԱՐ
5. ԿՆՅԱԶՅԱՆ ԱՐԱՅԻԿ
6. ՄԿՐՏՉՅԱՆ ԱՐԹՈՒՐ
7. ՆԱԼԲԱՆԴՅԱՆ ՌՈՒԲԵՆ
8. ՇԱՀԲԱԶՅԱՆ ԱՇՈՏ
9. ՍԵՐՈԲՅԱՆ ԱՍԱՏՈՒՐ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ձ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

*2016 թվականի նոյեմբերի 11*
*գ. Արշալույս*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐՇԱԼՈՒՅՍ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արշալույս համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Արշալույս, 0231-6-09-36

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

11 նոյեմբերի 2016 թվականի N 55-Ն

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐՇԱԼՈՒՅՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի առաջին մասի 18-րդ կետով, <<Տեղական տուրքերի և վճարների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ, 9-րդ և 10-րդ հոդվածներով և <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 56-րդ հոդվածի երկրորդ մասով.

### ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Սահմանել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արշալույս համայնքի վարչական տարածքում 2017 թվականի համար տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը՝ համաձայն հավելվածի:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝

Կողմ - 9 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԳՐԻԳՈՐՅԱՆ ՌՈՒԶԱՆՆԱ
2. ԵՓՐԵՄՅԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ
3. ԻՍՐԱՅԵԼՅԱՆ ԱՐԱՄ
4. ՀԱԽՎԵՐԴՅԱՆ ԳՈՀԱՐ
5. ԿՆՅԱԶՅԱՆ ԱՐԱՅԻԿ
6. ՄԿՐՏՉՅԱՆ ԱՐԹՈՒՐ
7. ՆԱԼԲԱՆԴՅԱՆ ՌՈՒԲԵՆ
8. ՇԱՀԲԱԶՅԱՆ ԱՇՈՏ
9. ՍԵՐՈԲՅԱՆ ԱՍԱՏՈՒՐ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Հ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

2016 թվականի նոյեմբերի 11
գ. Արշալույս

ՀԱՎԵԼՎԱԾ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ԱՐՇԱԼՈՒՅՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
2016 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 11-Ի ԹԻՎ 55-Ն ՈՐՈՇՄԱՆ

ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐՇԱԼՈՒՅՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ

1. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ նոր շենքերի, շինությունների (ներառյալ՝ ոչ հիմնական) շինարարության (տեղադրման) թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է՝

հիմնական օբյեկտների համար՝

1) մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական (ամառանոցային) տների, ինչպես նաև մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների համար՝ 5000 /հինգ հազար/ դրամ

2) սույն կետի 1-ին ենթակետով չնախատեսված օբյեկտների համար՝

ա. 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 10000 /տաս հազար/ դրամ.

բ. 501-ից մինչև 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 15000 /տասնհինգ հազար/ դրամ.

գ. 1001-ից մինչև 3000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 20 000/ քսան հազար / դրամ.

դ. 3001-ից և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 50 000 դրամ. /հիսուն հազար/ դրամ.

ոչ հիմնական շինությունների տեղադրման համար՝

3) մինչև 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 3000 /երեք հազար/ դրամ.

4) 20 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 5000 /հինգ հազար/ դրամ.

2. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման, արդիականացման, աշխատանքների (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված՝ շինարարության թույլտվություն

չպահանջվող դեպքերի) համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝

1) չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ սենքերի գործառական նշանակության փոփոխություն՝ 3000 դրամ հազար դրամ.

2) բացի օբյեկտի վերակառուցման, ուժեղացման, վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից, նախատեսվում է նաև կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ սենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա, բացի սույն կետի 1-ին ենթակետով սահմանված դրույքաչափի, կիրառվում են նաև նոր շինարարության համար <<Տեղական տուրքերի և վճարների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 1-ին կետով սահմանված նորմերը՝ օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացման կամ սենքերի գործառական նշանակության փոփոխության մասով.

3) նախատեսվում է միայն կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) շինարարություն կամ սենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա, <<Տեղական տուրքերի և վճարների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի իմաստով, այն համարվում է նոր շինարարություն, որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար <<Տեղական տուրքերի և վճարների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 1-ին կետով սահմանված նորմերը:

3. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է 5000 /հինգ հազար/ դրամ:

4. Համայնքի տարածքում տեղական տուրքը սահմանվում է՝

1) ոգելից և ալկոհոլային խմիչքի վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝
ա. մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 5000 դրամ,
բ. 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 5000 դրամ
գ. 51-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 5000 դրամ,
դ. 101-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 10000 դրամ,
ե. 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 15000 դրամ,
զ. 501 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 30000 դրամ:
2) ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝
ա. մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 5000 դրամ,
բ. 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 5000 դրամ,
գ. 51-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 5000 դրամ,
դ. 101-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 10000 դրամ,
ե. 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 15000 դրամ,

զ. 501 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 30000 դրամ:

5. Համայնքի տարածքում՝

ա) բացօթյա առևտուր կազմակերպելու թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է յուրաքանչյուր օրվա համար 350 դրամ՝ մեկ քառակուսի մետրի համար.
բ) հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի մանրածախ առևտրի կետերում հեղուկ վառելիքի և (կամ) սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի և տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է 200 000 դրամ.

գ) խանութներում, կրպակներում, հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի մանրածախ առևտրի կետերում կամ ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման և նորոգման ծառայության օբյեկտներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է 50 000 դրամ.

գա) համայնքի տարածքում հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվության համար տեղական տուրքը յուրաքանչյուր եռամսյակի համար սահմանվում է՝
հիմնական շինությունների ներսում՝
ա. մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 5000 դրամ,
բ. 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 10000 դրամ,
գ. 51-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 15000 դրամ,
դ. 101-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 20000 դրամ,
ե. 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 30000 դրամ,
զ. 501 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 5000 դրամ,
ոչ հիմնական շինությունների ներսում՝
ա. մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 1000 դրամ,
բ. 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 2000 դրամ,
գ. 51-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 400 դրամ,
դ. 101-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 8000 դրամ,
ե. 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 15000 դրամ,
զ. 501 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 25000 դրամ:

6. Համայնքի տարածքում՝ առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտները, բաղնիքները (սաունաները), խաղատները ժամը 24.00-ից հետո աշխատելու թույլտվության համար՝ տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է՝
ա) առևտրի օբյեկտների համար՝ 50 000 դրամ.
բ) հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար՝ 100 000 դրամ.
գ) բաղնիքների (սաունաների) համար՝ 500 000 դրամ.
դ) խաղատների կազմակերպման համար՝ 5 000 000 դրամ.
ե) շահումով խաղերի կազմակերպման համար՝ 500 000 դրամ.
զ) վիճակախաղերի կազմակերպման համար՝ 150 000 դրամ:

7. Համայնքի տարածքում յուրաքանչյուր ամսվա համար արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար մեկ քառակուսի մետրի տեղական տուրքը սահմանվում է՝

1) ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ 2000 /երկու հազար/ դրամ.
2) թունդ ալկոհոլային (սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս) արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ 3500 /երեք հազար հինգ հարյուր/ դրամ.
3) այլ արտաքին գովազդի համար՝ 1500 /հազար հինգ հարյուր/ դրամ.
դ) մինչև 2006 թվականի հոկտեմբերի 1-ը՝ ծխախոտի արտաքին գովազդի համար՝ 5000 դրամ.
ե) սոցիալական գովազդի համար՝ 0 դրամ:

7.1. Համայնքի տարածքում յուրաքանչյուր ամսվա համար արտաքին գովազդի դատարկ գովազդային վահանակների մեկ քառակուսի մետրի դիմաց սահմանվում է տեղական տուրք՝ տվյալ համայնքում օրենքով նախատեսված կարգով այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար սահմանված տուրքի 25 %-ի չափով:

7.2. Եթե արտաքին գովազդ տարածող գովազդակիրը տեղաբաշխել և տարածել է իր կազմակերպության գովազդը, ապա համապատասխան բյուջե պետք է վճարի յուրաքանչյուր քառակուսի մետրի համար օրենքով նախատեսված կարգով տվյալ համայնքում այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար սահմանված տուրքի 10 %-ը՝ այդ գովազդի մակերեսին համապատասխան:

8. Համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ և կրկնօրինակներ տրամադրելու համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է 10000 /տաս հազար/ դրամ: Հայաստանի Հանրապետության համայնքների անվանումները ֆիրմային անվանումներում օգտագործելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է 100000 /հարյուր հազար/ դրամ:

9. Համայնքի տարածքում մարդատար տաքսու (բացառությամբ երթուղային տաքսիների) ծառայություն իրականացնելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է 10 000 /տաս հազար/ դրամ:

9.1. Համայնքի ·տարածքում քաղաքացիական հոգեհանգստի (հրաժեշտի) ծիսակատարության ծառայություններ իրականացնելու և (կամ) մատուցելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է 300 000 դրամ:

10.Համայնքի կողմից մրցույթներ և աճուրդներ կազմակերպելու հետ կապված ծախսերի փոխհատուցման համար՝ մասնակիցներից վճար՝ 5000 /հինգ հազար/ դրամ.

11. Համայնքի կողմից աղբահանությունը կազմակերպելու համար՝ սահմանել տարեկան աղբահանության վճար՝ 5000 /երեք հազար/ դրամ.

2) ոչ կենցաղային և խոշոր եզրաչափի աղբի համար՝

ա. ըստ ծավալի՝ մեկ խորանարդ մետր աղբի համար՝ 3000 դրամ, կամ
բ. ըստ զանգվածի՝ մեկ տոննա աղբի համար՝ 5000 դրամ:

Աշխատակազմի քարտուղար՝ Ա. Առաքելյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐՇԱԼՈՒՅՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արշալույս համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Արշալույս, 0231-6-09-36

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

11 նոյեմբերի 2016 թվականի N 56-Ն

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐՇԱԼՈՒՅՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԿՈՂՄԻՑ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՄԱՏՈՒՑՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԻՄԱՑ ԳԱՆՁՎՈՂ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի առաջին մասի 19-րդ կետով.

## ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Սահմանել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արշալույս համայնքի կողմից 2017 թվականի ընթացքում մատուցվող ծառայությունների դիմաց գանձվող վճարների դրույքաչափերը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

## ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝

Կողմ - 9 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԳՐԻԳՈՐՅԱՆ ՌՈՒԶԱՆՆԱ
2. ԵՓՐԵՄՅԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ
3. ԻՍՐԱՅԵԼՅԱՆ ԱՐԱՄ
4. ՀԱԽՎԵՐԴՅԱՆ ԳՈՀԱՐ
5. ԿՆՅԱԶՅԱՆ ԱՐԱՅԻԿ
6. ՄԿՐՏՉՅԱՆ ԱՐԹՈՒՐ
7. ՆԱԼԲԱՆԴՅԱՆ ՌՈՒԲԵՆ
8. ՇԱՀԲԱԶՅԱՆ ԱՇՈՏ
9. ՍԵՐՈԲՅԱՆ ԱՍՏՈՒՐ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ռ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

*2016 թվականի նոյեմբերի 11*
*գ. Արշալույս*

ՀԱՎԵԼՎԱԾ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ԱՐՇԱԼՈՒՅՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
2016 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 11-Ի ԹԻՎ 56-Ն ՈՐՈՇՄԱՆ

ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐՇԱԼՈՒՅՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԿՈՂՄԻՑ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՄԱՏՈՒՑՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԻՄԱՑ ԳԱՆՁՎՈՂ ՎՃԱՐՆԵՐԻ

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արշալույսի համայնքի իրավասության շրջանակներում քաղաքացուն տրվող, ինչպես նաև հաստատվող փաստաթղթերի համար համայնքի կողմից մատուցվող ծառայությունների համար գանձվող վճարը սահմանվում է՝

1) համայնքի բնակիչ համարվող անձանց կտակը վավերացնելու համար՝ հինգ հազար դրամ.

2) համայնքի բնակիչ համարվող անձանց՝ տրանսպորտային միջոց վարելու իրավունք ստանալու լիազորագիր հաստատելու համար՝ երեք հազար դրամ.

3) համայնքի բնակիչ համարվող անձանց՝ աշխատավարձի և աշխատանքային հարաբերությունների հետ կապված այլ վճարներ ստանալու լիազորագիր հաստատելու մասին՝ երեք հազար դրամ.

4) համայնքի բնակիչ համարվող անձանց՝ նպաստներ և կրթաթոշակներ, քաղաքացիների՝ բանկային ավանդներ և փոստային առաքումներ (այդ թվում ՝ դրամական և ծանրոցային) ստանալու լիազորագիր հաստատելու համար՝ երեք հազար դրամ.

5) Համայնքի բնակիչ համարվող անձանց բնութագիր տալու համար՝ հինգ հազար դրամ.

2. Համայնքային ենթակայության ստեղծված դպրոցի երեխաների համար ծնողական վճար սահմանել՝ երեք հազար դրամ.

1) բնակչության առանձին խմբերի համար վճարների արտոնություններ սահմանել հետևյալ չափերով.

ա. մեկ ընտանիքից երեխա դպրոց հաճախող երկու և ավելի երեխաների համար՝75 տոկոսի չափով՝ երկու հազար երկու հարյուր հիսուն դրամ.

բ. միակողմանի ծնողազուրկ երեխաների համար՝ 50տոկոսի չափով՝ հազար հինգ հարյուր դրամ.

գ. երկկողմանի ծնողազուրկ երեխաների համար՝ 25 տոկոսի չափով՝ յոթ հարյուր հիսուն դրամ.

դ. զոհված և հաշմանդամ դարձած ազատամարտիկների, ինչպես նաև առաջին կարգի հաշմանդամների երեխաների համար՝ 100 տոկոսի չափով:

3. Համայնքի տարածքում տեղակայված անշարժ գույքին հասցե տրամադրելու համար վճար սահմանել՝ մեկ հազար դրամ:

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐՇԱԼՈՒՅՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արշալույս համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Արշալույս, 0231-6-09-36

### Ո Ր Ո Շ ՈՒ Մ

11 նոյեմբերի 2016 թվականի N 58

### ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅԱՆ ՉԱՓԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի առաջին մասի 8-րդ կետով.

### ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Որոշել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արշալույս համայնքի ղեկավարի վարձատրության չափը՝ երկու հարյուր յոթանասուն հազար Հայաստանի Հանրապետության դրամ:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

**ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝**

Կողմ - 9 . Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԳՐԻԳՈՐՅԱՆ ՌՈՒԶԱՆՆԱ
2. ԵՓՐԵՄՅԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ
3. ԻՍՐԱՅԵԼՅԱՆ ԱՐԱՄ
4. ՀԱԽՎԵՐԴՅԱՆ ԳՈՀԱՐ
5. ԿՆՅԱԶՅԱՆ ԱՐԱՅԻԿ
6. ՄԿՐՏՉՅԱՆ ԱՐԹՈՒՐ
7. ՆԱԼԲԱՆԴՅԱՆ ՌՈՒԲԵՆ
8. ՇԱՀԲԱԶՅԱՆ ԱՇՈՏ
9. ՍԵՐՈԲՅԱՆ ԱՍԱՏՈՒՐ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ռ. ԳՐԻԳՈՐՅԱՆ**

*2016 թվականի նոյեմբերի 11*
*գ. Արշալույս*

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ**
**ԱՐՇԱԼՈՒՅՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արշալույս համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Արշալույս, 0231-6-09-36

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

11 նոյեմբերի 2016 թվականի N 59

## *ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի առաջին մասի 5-րդ կետով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը.

***ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝***

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արշալույս համայնքի սոցիալապես անապահով բնակիչներին հատկացնել դրամական օգնություն՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

***ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝***

Կողմ - 9 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԳՐԻԳՈՐՅԱՆ ՌՈՒԶԱՆՆԱ
2. ԵՓՐԵՄՅԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ
3. ԻՍՐԱՅԵԼՅԱՆ ԱՐԱՄ
4. ՀԱԽՎԵՐԴՅԱՆ ԳՈՀԱՐ
5. ԿՆՅԱԶՅԱՆ ԱՐԱՅԻԿ
6. ՄԿՐՏՉՅԱՆ ԱՐԹՈՒՐ
7. ՆԱԼԲԱՆԴՅԱՆ ՌՈՒԲԵՆ
8. ՇԱՀԲԱԶՅԱՆ ԱՇՈՏ
9. ՍԵՐՈԲՅԱՆ ԱՍՏՎԱԾԱՏՈՒՐ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ձ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

*2016 թվականի նոյեմբերի 11*

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐՇԱԼՈՒՅՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արշալույս համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Արշալույս, 0231-6-09-36

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

11 նոյեմբերի 2016 թվականի N 60

## *2017 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի առաջին մասի 3-րդ կետով, 54-րդ հոդվածով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը.

### *ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է '*

1.Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արշալույս համայնքի 2017 թվականի բյուջեի եկամտային և ծախսային մասերը ՛ համաձայն հավելվածի:
2. Թույլատրել համայնքի ղեկավարին համայնքի բյուջեի կատարման ընթացքում կատարելու վերաբաշխումներ ըստ գործառնական և տնտեսագիտական դասակարգման ծախսերի նախատեսված հոդվածների միջև:
3. Սահմանել, որ փոփոխությունների հանրագումարը բյուջետային տարվա ընթացքում չի կարող գերազանցել չափաքանակների 50%-ը:
4.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

***ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ'***

Կողմ - 9 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԳՐԻԳՈՐՅԱՆ ՌՈՒԶԱՆՆԱ
2. ԵՓՐԵՄՅԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ
3. ԻՍՐԱՅԵԼՅԱՆ ԱՐԱՄ
4. ՀԱԽՎԵՐԴՅԱՆ ԳՈՀԱՐ
5. ԿՆՅԱԶՅԱՆ ԱՐԱՅԻԿ
6. ՄԿՐՏՉՅԱՆ ԱՐԹՈՒՐ
7. ՆԱԼԲԱՆԴՅԱՆ ՌՈՒԲԵՆ
8. ՇԱՀԲԱԶՅԱՆ ԱՇՈՏ
9. ՍԵՐՈԲՅԱՆ ԱՍԱՏՈՒՐ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ'** **Զ. ԳՐԻԳՈՐՅԱՆ**

*2016 թվականի նոյեմբերի 11*
*գ. Արշալույս*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ԱՐՇԱԼՈՒՅՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արշալույս համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Արշալույս, 0231-6-09-36

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

11 նոյեմբերի 2016 թվականի N 61

## *ՀՈՂԻ ՀԱՐԿԻ ԳԾՈՎ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

Ղեկավարվելով << Հողի հարկի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածով.

*ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝*

1. Սահմանել հողի հարկի գծով արտոնություն Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արշալույս համայնքի բնակիչների նկատմամբ՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

*ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝*

Կողմ - 9 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԳՐԻԳՈՐՅԱՆ ՌՈՒԶԱՆՆԱ
2. ԵՓՐԵՄՅԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ
3. ԻՍՐԱՅԵԼՅԱՆ ԱՐԱՄ
4. ՀԱԽՎԵՐԴՅԱՆ ԳՈՀԱՐ
5. ԿՆՅԱԶՅԱՆ ԱՐԱՅԻԿ
6. ՄԿՐՏՉՅԱՆ ԱՐԹՈՒՐ
7. ՆԱԼԲԱՆԴՅԱՆ ՌՈՒԲԵՆ
8. ՇԱՀԲԱԶՅԱՆ ԱՇՈՏ
9. ՍԵՐՈԲՅԱՆ ԱՍԱՏՈՒՐ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ռ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

*2016 թվականի նոյեմբերի 11*
*գ. Արշալույս*

ՀԱՎԵԼՎԱԾ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ԱՐՇԱԼՈՒՅՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
2016 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 11-Ի ԹԻՎ 61 ՈՐՈՇՄԱՆ

# ՑՈՒՑԱԿ
## ՀՈՂԻ ՀԱՐԿԻ ԳԾՈՎ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

| N | Ազգանուն անուն | կադաստրային ծածկագիր | հա | հարկի չափը |
|---|---|---|---|---|
| 1 | Մանուկյան Գագիկ Սմբատի | 04-021-281-002 | 0.4 | 11856 |
| | | 04-021-280-002 | 0.4 | 11838 |
| | | 04-021-030-008 | 0.16 | 3394 |
| 2 | Սայադյան Արմեն Գևորգի | 04-021-025-002 | 0.151 | 3208 |
| ԸՆԴԱՄԵՆԸ | | | 1.111 | 30296 |